21-11

«ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 30-50ՏՈԿՈՍ ՁԵՂՉՈՎ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԵԲԿԳՀԱՊՁԲ 21/11»

ք. Եղեգնաձոր «28» ապրիլի 2021թ.

«Եղեգնաձորի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Կարեն Ասատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ալֆա-ֆարմ ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Մ. Մացակյանի, որը գործում է Ալֆա-ֆարմ ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 652 443,45 (վեց հարյուր հիսուներկու հազար չորս հարյուր քառասուներեք ՀՀ դրամ 45 լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[17] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

---

[17] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը*

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավելի տարեթվեր, ապա տուգանքը հաշվարկվում է

պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[22]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[23]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի

---

[22] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[23] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[24]

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Եղեգնաձորի բժշկական կենտրոն»ՓԲԸ	«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Եղեգնաձոր, Վայքի 1	Իրավ. հասցե՝ ք. Երևան, Շիրակի 1/68
Բանկ՝ «Յունիբանկ»ՓԲԸ	Գործ. հասցե՝ ք. Երևան, Շիրակի 1/68
Հ/Հ 24113002340100	Այ Դի Բանկ
ՀՎՀՀ 08909438	Հ/Հ 11815019068400
Տնօրեն Կարեն Ասատրյան	ՀՎՀՀ 05507136
/ստորագրություն/	Հեռ. 060 700-500
Կ.Տ	էլ. հասցե՝ tender@alfapharm.am
	/ստորագրություն/
	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

[24] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի*

Հավելված
«28» ապրիլի 2021թ. կնքված
ԵԲԿԳՀԱՊՁԲ 21/11 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի								մատակարարման		
գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
33621720	Բիսոպրոլոլ		5մլ բլիստերիում	դեղահատ	30,17	9050	300,0	ք.Եղեգնաձոր, Վայքի 1 «Եղեգնաձորի բժշկական կենտրոն»ՓԲԸ	2021 թվականին ապրանքը կմատակարարվի այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելուց հետո մինչև 25.12.2021	
33631310	Դիկլոֆենակ		100մգ բլիստերիում	դեղահատ	26,35	5270	200,0			
33631310	Դիկլոֆենակ		25մգ/մլ 3մլ ներարկման լ-թ	սրվակ	79,00	3950	50,0			
33621520	Էնալապրիլ+հիդրոքլորը թիազիդ		10մգ+25մգ բլիստերիում	դեղահատ	21,80	13080	600,0			
33691231	Կալցիումի կարբոնատ+խոլեկալցիֆերոլ		500մգ+200մգ	դեղահատ	46,26	46260	1 000,0			
33671113	Սալբուտամոլ		100մկգ/դեզա 200դոզա աէրոզոլ	հատ	1950,00	39000	20,0			
33621620	Սպիրոնոլակտոն		25մգ	դեղահատ	40,00	8000	200,0			
33661121	Ացետիլսալիցիլաթթու		150մգ	դեղահատ	49,33	19733,33	400,0			
33621420	Ատորվաստատին		20մգ	դեղահատ	15,58	4675	300,0			
33661121	Ացետիլսալիցիլաթթու		100մգ	դեղահատ	25,30	5060	200,0			
33631310	Դիկլոֆենակ դոնդող		5% 50գ	տուփ	1777,00	17770	10,0			
33642230	Լևոթիրոքսին		50մլգ	դեղահատ	11,11	5555	500,0			
33621140	Կլոպիտոգրել		75մգ	դեղահատ	140,00	42000	300,0			
33621360	Նիտրոգլիցերին		0.5գ	դեղահատ	8,98	1795	200,0			
33642210	Պրեդնիզոլոն		5մգ	դեղահատ	7,38	2214	300,0			
33691196	Ռիսպերիդոն		2մգ	դեղահատ	59,50	17850	300,0			
33651118	Ցեֆտրիաքսոն		1գ	սրվակ	176,00	7040	40,0			

33611100	Օմեպրազոլ		20մգ	դեղապատիճ	12,47	3740	300,0		
33691236	Քլորոպիրամին		25մգ	դեղահատ	58,55	12295,5	210,0		
33691186	Պիրացետամ		20մգ 5մլ	սրվակ	47,90	4790	100,0		
33631380	Տոլպերիզոն		150մգ	դեղահատ	126,60	25320	200,0		
33691186	Պիրացետամ		400մգ	դեղապատիճ	12,30	2460	200,0		
33691212	Դիոսմին հիսպերիդին		450մգ+50մգ	դեղահատ	92,73	27820	300,0		
33661133	Լևոդոպա+կարբիտոպա		250մգ+25մգ	դեղահատ	99,36	29808	300,0		
33661127	Մետամիզոլ		50մգ/մլ 2մլ	սրվակ	38,30	7660	200,0		
33671130	Դիֆենհիդրամին		10մգ/մլ 1մլ	սրվակ	22,30	4460	200,0		
33651134	Ցիպրոֆլոքսացին		3մգ/մլ ականջի և աչքի կաթիլներ	հատ	410,00	4100	10,0		
33621764	Պերինդոպրիլ+ինդապամիդ+ամլոդիպին		4մգ+1,25մգ+5մգ	դեղահատ	159,17	79583,33	500,0		
33621769	Լոզարտան+հիդրոքլորթիազիդ		50մգ+12,5մգ	դեղահատ	55,89	27946,43	500,0		
33621720	Բիսոպրոլոլ+ամլոդիպին		5մգ+10մգ	դեղահատ	167,40	50220	300,0		
33691176	Բիսոպրոլոլ+պերինդոպրիլ		10մգ+5մգ	դեղահատ	170,87	51260	300,0		
33611170	Դրոտավերին հ/ք		40մգ	դեղահատ	10,55	2110	200,0		
33611170	Դրոտավերին հ/ք		40մգ 2մլ	սրվակ	60,00	3000	50,0		
33651131	Սուլֆամեթոքսազոլ+տրիմեթոպրիմ		400+80մգ	դեղահատ	35,25	7050	200,0		
33671123	Գլաուցին/գլաուցինի հիդրոբրոմիդ/Էպեդրին		125մլ դեղակախույթ	հատ	624,00	6240	10,0		
33671131	Լորատադին		10մգ	դեղահատ	25,10	2510	100,0		
33611470	Պանտոպրազոլ		20մգ	դեղապատիճ	59,46	11892,86	200,0		
33611100	Օմեպրազոլ		20մգ	դեղապատիճ	12,47	3740	300,0		
33611150	Պանկրեատին/լիպազ, ամիլազա,պրոտեազա /		150մգ բլիստերիում	դեղահատ	120,45	36135	300,0		

նքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում
գրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը
րարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:
ոավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են
ային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից
ային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:
կայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում
միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:
ոադիր պայման դեղատունը պետք է գտնվի եղեգնաձորի ԲԿ-ից ոչ ավելի քան 10կմ շառավղով հեռավորության վրա:

ԳՆՈՐԴ

«Եղեգնաձորի բժշկական կենտրոն»ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Եղեգնաձոր, Վայքի 1
Բանկ՝ «Յունիբանկ»ՓԲԸ
Հ/Հ 24113002340100
ՀՎՀՀ 08909438
Տնօրեն Կարեն Ամատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ
Իրավ. հասցե՝ ք. Երևան, Շիրակի 1/68
Գործ. հասցե՝ ք. Երևան, Շիրակի 1/68
Այ Դի Բանկ
Հ/Հ 11815019068400
ՀՎՀՀ 05507136
Հեռ. 060 700-500
էլ. հասցե՝ tender@alfapharm.am

/ստորագրություն/
Կ.Տ

33611100	Օմեպրազոլ		20մգ	դեղապատիճ	12,47	3740	300,0		
33691236	Քլորոպիրամին		25մգ	դեղահատ	58,55	12295,5	210,0		
33691186	Պիրացետամ		20մգ 5մլ	սրվակ	47,90	4790	100,0		
33631380	Տոլպերիզոն		150մգ	դեղահատ	126,60	25320	200,0		
33691186	Պիրացետամ		400մգ	դեղապատիճ	12,30	2460	200,0		
33691212	Դիոսմին հիսպերիդին		450մգ+50մգ	դեղահատ	92,73	27820	300,0		
33661133	Լևոդոպա+կարբիտոպա		250մգ+25մգ	դեղահատ	99,36	29808	300,0		
33661127	Մետամիզոլ		50մգ/մլ 2մլ	սրվակ	38,30	7660	200,0		
33671130	Դիֆենհիդրամին		10մգ/մլ 1մլ	սրվակ	22,30	4460	200,0		
33651134	Ցիպրոֆլոքսացին		3մգ/մլ ականջի և աչքի կաթիլներ	հատ	410,00	4100	10,0		
33621764	Պերինդոպրիլ+ինդապամիդ+ամլոդիպին		4մգ+1,25մգ+5մգ	դեղահատ	159,17	79583,33	500,0		
33621769	Լոզարտան+հիդրոքլորթիազիդ		50մգ+12,5մգ	դեղահատ	55,89	27946,43	500,0		
33621720	Բիսոպրոլոլ+ամլոդիպին		5մգ+10մգ	դեղահատ	167,40	50220	300,0		
33691176	Բիսոպրոլոլ+պերինդոպրիլ		10մգ+5մգ	դեղահատ	170,87	51260	300,0		
33611170	Դրոտավերին հ/ք		40մգ	դեղահատ	10,55	2110	200,0		
33611170	Դրոտավերին հ/ք		40մգ 2մլ	սրվակ	60,00	3000	50,0		
33651131	Սուլֆամեթոքսազոլ+տրիմեթոպրիմ		400+80մգ	դեղահատ	35,25	7050	200,0		
33671123	Գլաուցին/գլաուցինի հիդրոբրոմիդ/էպեդրին		125մլ դեղակախույթ	հատ	624,00	6240	10,0		
33671131	Լորատադին		10մգ	դեղահատ	25,10	2510	100,0		
33611470	Պանտոպրազոլ		20մգ	դեղապատիճ	59,46	11892,86	200,0		
33611100	Օմեպրազոլ		20մգ	դեղապատիճ	12,47	3740	300,0		
33611150	Պանկրեատին/լիպազ, ամիլազա,պրոտեազա /		150մգ բլիստերիում	դեղահատ	120,45	36135	300,0		

նքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում
ագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը
րարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:
րավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են
ային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից
ային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:
պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում
միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:
ռադիր պայման դեղատունը պետք է գտնվի Եղեգնաձորի ԲԿ-ից ոչ ավելի քան 10կմ շառավղով հեռավորության վրա:

ԳՆՈՐԴ

«Եղեգնաձորի բժշկական կենտրոն»ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Եղեգնաձոր, Վայքի 1
Բանկ՝ «Յունիբանկ»ՓԲԸ
Հ/Հ 24113002340100
ՀՎՀՀ 08909438
Տնօրեն Կարեն Ասատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ
Իրավ. հասցե՝ ք. Երևան, Շիրակի 1/68
Գործ. հասցե՝ ք. Երևան, Շիրակի 1/68
Այ Դի Բանկ
Հ/Հ 11815019068400
ՀՎՀՀ 05507136
Հեռ. 060 700-500
էլ. հասցե՝ tender@alfapharm.am

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված
« 28 »ապրիլի 2021թ. կնքված
ԵԲԿԳՀԱՊՁԲ 21/11ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
33621720	Բիսոպրոլոլ					1810	3620	5430	6788	7240	7693	8145	9050	9050
33631310	Դիկլոֆենակ					1054	2108	3162	3953	4216	4480	4743	5270	5270
33631310	Դիկլոֆենակ					790	1580	2370	2963	3160	3358	3555	3950	3950
33621520	Էնալապրիլ+հիդրոքլոր թիազիդ					2616	5232	7848	9810	10464	11118	11772	13080	13080
33691231	Կալցիումի կարբոնատ+խոլեկալցիֆերոլ					9252	18504	27756	34695	37008	39321	41634	46260	46260
33671113	Սալբուտամոլ					7800	15600	23400	29250	31200	33150	35100	39000	39000
33621620	Սպիրոնոլակտոն					1600	3200	4800	6000	6400	6800	7200	8000	8000
33661121	Ացետիլսալիցիլաթթու					3947	7893	11840	14800	15787	16773	17760	19733	19733,33
33621420	Ատորվաստատին					935	1870	2805	3506	3740	3974	4208	4675	4675
33661121	Ացետիլսալիցիլաթթու					1012	2024	3036	3795	4048	4301	4554	5060	5060
33631310	Դիկլոֆենակ դոնդող					2354	4708	7062	8828	9416	10005	10593	17770	17770
33642230	Լևոթիրոքսին					1111	2222	3333	4166	4444	4722	5000	5555	5555
33621140	Կլոպիտոգրել					8400	16800	25200	31500	33600	35700	37800	42000	42000
33621360	Նիտրոգլիցերին					359	718	1077	1346	1436	1526	1616	1795	1795
33642210	Պրեդնիզոլոն					443	886	1328	1661	1771	1882	1993	2214	2214
33691196	Ռիսպերիդոն					3570	7140	10710	13388	14280	15173	16065	17850	17850
33651118	Ցեֆտրիաքսոն					1408	2816	4224	5280	5632	5984	6336	7040	7040
33611100	Օմեպրազոլ					748	1496	2244	2805	2992	3179	3366	3740	3740
33691236	Քլորոպիրամին					2459	4918	7377	9221	9836	10451	11066	12295,5	12295,5
33691186	Պիրացետամ					958	1916	2874	3593	3832	4072	4311	4790	4790
33631380	Տոլպերիզոն					5064	10128	15192	18990	20256	21522	22788	25320	25320
33691186	Պիրացետամ					492	984	1476	1845	1968	2091	2214	2460	2460
33691212	Դիոսմին հիսպերիդին					5564	11128	16692	20865	22256	23647	25038	27820	27820
33661133	Լևոդոպա+կարբիտոպա					5962	11923	17885	22356	23846	25337	26827	29808	29808

25	33661127	Մետամիզոլ					1532	3064	4596	5745	6128	6511	6894	7660	7660
26	33671130	Դիֆենհիդրամին					892	1784	2676	3345	3568	3791	4014	4460	4460
28	33651134	Ցիպրոֆլոքսացին					820	1640	2460	3075	3280	3485	3690	4100	4100
0	33621764	Պերինդոպրիլ+ինդապամիդ+ամլոդիպին					15917	31833	47750	59687	63667	67646	71625	79583	79583,33
1	33621769	Լոզարտան+հիդրոքլորթիազիդ					5589	11179	16768	20960	22357	23754	25152	27946	27946,43
2	33621720	Բիսոպրոլոլ+ամլոդիպին					10044	20088	30132	37665	40176	42687	45198	50220	50220
3	33691176	Բիսոպրոլոլ+պերինդոպրիլ					10252	20504	30756	38445	41008	43571	46134	51260	51260
4	33611170	Դրոտավերին հ/ք					422	844	1266	1583	1688	1794	1899	2110	2110
5	33611170	Դրոտավերին հ/ք					600	1200	1800	2250	2400	2550	2700	3000	3000
6	33651131	Սուլֆամեթոքսազոլ+տրիմեթոպրիմ					1410	2820	4230	5288	5640	5993	6345	7050	7050
7	33671123	Գլաուցին/գլաուցինի հիդրոբրոմիդ/էպեդրին					1248	2496	3744	4680	4992	5304	5616	6240	6240
8	33671131	Լորատադին					502	1004	1506	1883	2008	2134	2259	2510	2510
9	33611470	Պանտոպրազոլ					2379	4757	7136	8920	9514	10109	10704	11893	11892,86
0	33611100	Օմեպրազոլ					748	1496	2244	2805	2992	3179	3366	3740	3740
1	33611150	Պանկրեատին/լիպազ,ամիլազա,պրոտեազա/					7227	14454	21681	27101	28908	30715	32522	36135	36135

ան ենթակա գումարները ներկայացվում են առողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն կացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս: ոում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ

«Եղեգնաձորի բժշկական կենտրոն»ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Եղեգնաձոր, Վայքի 1
Բանկ՝ «Յունիբանկ»ՓԲԸ
Հ/Հ 24113002340100
ՀՎՀՀ 08909438
Տնօրեն Կարեն Ասատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ
Իրավ. հասցե՝ ք. Երևան, Շիրակի 1/68
Գործ. հասցե՝ ք. Երևան, Շիրակի 1/68
Այ Դի Բանկ
Հ/Հ 11815019068400
ՀՎՀՀ 05507136
Հեռ. 060 700-500
էլ. հասցե՝ tender@alfapharm.am

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 28 »ապրիլի 2021թ. կնքված
ԵԲԿԳՀԱՊՁԲ 21/11 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 21 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 21 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 21 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 28 »ապրիլի 2021թ. կնքված
ԵԲԿԳՀԱՊՁԲ 21/11 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն